ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

№ 33/08

Քաղ. Երևան 08 դեկտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ. Վարդանյան, Գ.Հ.Ադամյան, Ա.Ա.Տոնիկյան և Ա.Վ.Բաբայան, իր 2008թ. դեկտեմբերի 08-ի նիստում (արձանագրություն № 66/1) քննարկեց ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ԱԾ Կոտայքի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող Հայկ Բաբաջանյանի 06.11.2008թ բողոքը «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի իրեն պատկանող գրանցման թիվ 5497, 7731, 9737, 10123, 10197, 10884, 11379, 11380, 11381 ապրանքային նշանները, ինչպես նաև ՀՀ-ում հանրահայտ ճանաչված թիվ 14 «ՆՈՅ» ապրանքային նշանը «Սիլ կոնցեռն» ՍՊԸ-ին զիջելու մասին պայմանագրի գրանցման մասին որոշման դեմ (պայմանագրի գրանցման թիվ 803):

Գործի նախապատմությունը՝

31.07.2008թ «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ն դիմում է ներկայացրել գործակալություն իրեն պատկանող գրանցման թիվ 5497, 7731, 9737, 10123, 10197, 10884, 11379, 11380, 11381 ապրանքային նշանները, ինչպես նաև ՀՀ-ում հանրահայտ ճանաչված թիվ 14 «ՆՈՅ» ապրանքային նշանը «Սիլ կոնցեռն» ՍՊԸ-ին զիջելու մասին պայմանագիրը գրանցելու համար: Գործակալությունը 07.08.2008թ կայացրել է որոշում նշված զիջման պայմանագիրը գրանցելու մասին՝ գրանցման համարը 803:

Բողոքարկողի փաստարկները հետևյալն են՝

17.07.2008թ. ՀՀ Հարկային պետական ծառայության հանքարտադրողների ոլորտային հարկային տեսչությունը ՀՀ վարչական դատարան հակընդդեմ հայցադիմում է ներկայացրել «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ից գումար բռնագանձելու պահանջի մասին:

Նկատի ունենալով, որ դատարանի կայացվող վճիռը, ինչպես նաև դրա կատարումը կարող էր առընչվել նաև նշված ընկերության ակտիվներին, այդ թվում՝ ոչ նյութական, «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ն իրեն պատկանող գրանցման թիվ 5497, 7731, 9737, 10123, 10197, 10884, 11379, 11380, 11381 ապրանքային նշանները, ինչպես նաև ՀՀ-ում հանրահայտ ճանաչված թիվ 14 «Նոյ» ապրանքային նշանը պայմանագրով զիջել է «Սիլ Կոնցեռն» ՍՊԸ-ին և նշված պայմանագիրը 31.07.2008թ. գրանցման է ներկայացրել ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն:

Նկատի ունենալով, որ մտավոր սեփականության գործակալությունը տեղեկացված չի եղել (հանգամանքը պարզվել է բանավոր հարցմամբ) ՀՀ վարչական դատարան ներկայացված հակընդդեմ

հայցադիմումի և օրենսդրությամբ սահմանված կարգով դատավարական գործընթացներին, նշված ապրանքային նշանների զիջման մասին պայմանագիրը գործակալությունը գրանցել է 07.08.2008թ:

Գտնում ենք, որ նշված պայմանագրի գրանցումը կատարվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով սահմանված պահանջների խախտմամբ, քանի որ նշված պայմանագրի գրանցման հետ կապված վարչական վարույթը պետք է կասեցվեր:

Բողոքարկողը կից ներկայացրել է ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումի պատճենը, Վճռի առաջին և վերջին էջերը, Կատարողական թերթի և կայացված որոշումների օրինակները:

Այսպիսով բողոքարկողը ղեկավարվելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով, և հաշվի առնելով ՀՀ վարչական դատարանի 14.10.2008թ վճռի հիման վրա տրված կատարողական թերթի ապահովման անհրաժեշտությունը, խնդրել է անվավեր ճանաչել գործակալության՝ ապրանքային նշանների զիջման մասին պայմանագիրը գրանցելու մասին 2008թ օգոստոսի 7-ի որոշումը:

Նշենք նաև, որ գործակալությունը ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ԱԾ Կոտայքի մարզային բաժնի պետի 27.10.2008թ-ի Ե-2652 գրությամբ 27.10.2008թ-ին ստացել է «պարտապան «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ին պատկանող ապրանքային նշանների վրա արգելանք դնելու մասին» Ավագ հարկադիր կատարող Հ.Բաբաջանյանի որոշումը:

Բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում քննարկելով ներկայացված նյութերը և առարկությունները, ինչպես նաև հաշվի առնելով նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները բողոքարկման խորհուրդը պարզեց, որ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայությունը 17.07.2008թ հակընդդեմ հայցադիմում էր ներկայացրել ՀՀ վարչական դատարան 4.134.366.400 (չորս միլիարդ հարյուր երեսունչորս միլիոն երեք հարյուր վացունվեց հազար չորս հարյուր) դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին, նման խոշոռ գումար բռնագանձելու պահանջի պայմաններում դատարանը և՛ դատավարության ընթացքում և՛ վճռով կարող էր անդրադառնալ ընկերության և՛ նյութական և՛ ոչ նյութական ակտիվներին, այդ թվում ապրանքային նշաներին, արգելանք կիրառելով: Որը և ըստ էության կատարվել է ՀՀ վարչական դատարանի 14.10.2008թ վճռի հիման վրա տրված կատարողական թերթի, պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին և պարտապան «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ին պատկանող ապրանքային նշանների վրա արգելանք դնելու մասին հարկադիր կատարողի համապատասխան որոշումներով, որոնց վերաբերյալ գործակալությունը տեղեկացվել է 27.10.2008թ, այսինքն ավելի ուշ քան կատարվել է ապրանքային նշանների զիջման մասին պայմանագրի գրանցումը: Ակնհայտ է, որ համապատասխան զիջման մասին պայմանագիրը գրանցելու դիմումը ներկայացնելուց «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ն ՀՀ վարչական դատարանի 14.10.2008թ վճռի և կատարողական վարույթի հարուցման մասին տեղյակ է եղել: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ կետի «գ» ենթակետը սահմանում է, որ «վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք չունի, եթե նախապես իմացել է վարչական ակտի ոչ իրավաչափ լինելու մասին կամ այդ մասին պարտավոր էր իմանալ՝ իր համար մատչելի տեղեկությունների հիման վրա», ուստի

«Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ն վիճարկվող վարչական ակտին վստահելու իրավունք չունի: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն «անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում», տվյալ դեպքում ՀՀ վարչական դատարանի 14.10.2008թ վճռի հիման վրա տրվել է կատարողական թերթ, և 20.10.2008թ հարկադիր կատարողի կողմից ընդունվել է պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին որոշում, ինչպես նաև ընդունվել է պարտապան «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ին պատկանող ապրանքային նշանների վրա արգելանք դնելու մասին որոշում, որոնց առկայության պարագայում նշված զիջման պայմանագրի գրանցման մասին որոշման փոխարեն պետք է ընդունվեր վարչական վարույթը կասեցնելու և/կամ գրանցումը մերժելու մասին որոշում: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «վարչական բողոքը քննարկվում է բողոքարկված վարչական ակտի իրավաչափության տեսանկյունից»: Ուստի հաշվի առնելով վերոգրյալը գործակալության բողոքրկման խորհուրդը գտնում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետը սահմանում է, որ «վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև վարչական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը», տվյալ դեպքում գործակալությունը պարտավոր կլիներ կասեցնելու վարչական վարույթը՝ ապրանքային նշանների զիջման պայմանագրի գրանցման գործընթացը, մինչև ՀՀ վարչական դատարանի կողմից դատական ակտ կայացնելը, քանի որ արգելանքի կիրառման դեպքում, որը ըստ էության հետագայում կատարվել է, անհնարին կլիներ գործակալության կողմից արգելանքի տակ գտնվող ապրանքային նշանների զիջման պայմանագրի գրանցումը: Ուստի հաշվի առնելով վերոգրյալը գործակալության բողոքրկման խորհուրդը համաձայն է բողոքարկողի այն փաստարկի հետ, որ «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի իրեն պատկանող գրանցման թիվ 5497, 7731, 9737, 10123, 10197, 10884, 11379, 11380, 11381 ապրանքային նշանները, ինչպես նաև ՀՀ-ում հանրահայտ ճանաչված թիվ 14 «ՆՈՅ» ապրանքային նշանը «Սիլ կոնցեռն» ՍՊԸ-ին զիջելու մասին պայմանագրի գրանցման մասին որոշումը կատարվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի խախտմամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն «Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ»: Նշենք, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերությունը սահմանում է, որ «Ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչնվել, եթե ակտի հասցեատերն իրավունք ունի վստահելու վարչական ակտի գոյությանը, և վերջինիս գործողության մեջ գտնվլը չի կարող վնաս պատճառել որևէ անձի իրավունքներին, Հայաստանի Հանրապետությանը կամ որևէ համայնքի», տվյալ դեպքում վիճարկվող վարչական ակտի գործողության մեջ գտնվելը վնաս է հասցնում Հայաստանի

Հանրապետությանը, քանի որ, համապատասխան վճռով բռնագանձումը կատրվում է հօգուտ ՀՀ պետական բյուջեի, հետևաբար վիճարկվող վարչական ակտը ենթակա է անվավեր ճանաչման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» ենթակետերով, բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ԱԾ Կոտայքի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող Հայկ Բաբաջանյանի 06.11.2008թ բողոքը և «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի իրեն պատկանող գրանցման թիվ 5497, 7731, 9737, 10123, 10197, 10884, 11379, 11380, 11381 ապրանքային նշանները, ինչպես նաև ՀՀ-ում հանրահայտ ճանաչված թիվ 14 «ՆՈՅ» ապրանքային նշանը «Սիլ կոնցեռն» ՍՊԸ-ին զիջելու մասին պայմանագրի գրանցման մասին 07.08.2008թ որոշումը պայմանագրի գրանցման թիվ 803, անվավեր ճանաչել:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան